

10793

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՅԵՐԿՐՆԵՐԻ ՄԻԱՅԵ Ք

ԿԻԳ

ԱՆԱՄՆԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԱՄՐԱՊՆԴՄԱՆ

ՈՒ \_\_\_\_\_

ԶԱՐԳԱՑՄԱՆ ԶԵՌՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

636  
4-15

ԳՑՈՒՂՅՐՍ 1935 ՅԵՐԵՎԱՆ

24 SEP 2010

636  
4-15

# ԱՆԱՍՆԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԱՄՐԱՊՆԴՄԱՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԶԵՌՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

(ԽՅՀՄ հասցեատեղիային յիվ ամսամագուսկան խորհրդատուքյունների ծաղկում  
բնկ. Մ. Ի. ԿԱՄՄԱՆՈՎԻՉԻ գեկուցումը խորհուրդների 7-րդ համագումարում)

Ընկերներ, մեր կուսակցության XVII-րդ համագումարում  
ընկ. Ստալինի աված ցուցումների հիման վրա Կենտրոնական Կո-  
միտեյի հունիսյան պլենումը ավեց անասնապահության զարգաց-  
ման ու վերելքի ծավալուն ծրագիրը: Կենտկոմի հունիսյան պլե-  
նումն ամենայն պարզորոշությամբ բնորոշեց անասնապահական  
խորհրդատուությունների գերն այդ գործում: Պլենումը մատնա-  
նշեց, զոր անասնապահական խորհրդատուությունների գլխավոր  
խնդիրն է անասունների ցեղի բարելավումն ու նրանց մթերա-  
տվություն բարձրացումը, խորհրդատուություններն առախճանա-  
բար դարձնելով բարելավված ու ցեղական անասունների իրապես  
որինակելի անտեսություններ: Անասնապահական խորհրդատու-  
ությունները պետք է տարեցտարի ավելացնեն կոլտնտեսային  
ֆերմաներին հասակավոր անասուններ ու մատղաշներ բաց թող-  
նելը (վաճառքը) և զբանով իսկ դառնան կոլտնտեսային ապրան-  
քային ֆերմաների զարգացման գործում կոլտնտեսությունների  
պետական ուղնություն ցույց տալու կարևորագույն աղբյուրը:  
Այդ նշանակում է, զոր խորհրդատուությունները պետք է  
համառորեն աշխատեն յերեք հիմնական խնդիրների լուծման  
ուղղությամբ.

- ա) առավելագույն չափով ավելացնել ու բարելավել ապ-  
րանքային արտադրանքը:
- բ) տարեցտարի ավելացնել կոլտնտեսային ապրանքային  
ֆերմաներին և կոլտնտեսականներին վաճառվող անասունների  
քանակը:

1007  
34214

10798





Թացքում խորհանտեսությունները խոշոր աշխատանք են կատարել անասունների ցեղը բարելավելու ընագավառում:

Մաքրացեղ խոշոր յեղջերավոր անասունների քանակը հասավ 367 հազար գլխի, և մետրոսային հոտը, այսինքն բարելավված ցեղի հոտը՝ 313 հազ. գլխի: Վոչխարաբուծական խորհանտեսությունների գծով նուրբ բուրգ ունեցող վոչխարների մաքրացեղ հոտը, վոր 1930 թ. ուներ 350 հազ. վոչխար, 1934 թ. հասավ մինչև 650 հազարի: Բացի դրանից, կիսակոշտ բուրգ ունեցող հոտը 270 հազարից աճեց ու առ 1-ն հունվարի 1935 թվի հասավ մինչև 1.600 հազ. գլխի, վորն արդյունք եր կոշտ բուրգ ունեցող վոչխարները նուրբ բուրգ ունեցողներին, ռամբուլյե, պրեկոս և մասամբ տեղական մերինոս վոչխարների հետ մետրոսացման յենթարկելու ուղղությամբ վոչխարաբուծական խորհանտեսությունների կատարած աշխատանքի: Խոզաբուծական խորհանտեսությունների հոտը ներկայումս բազկացած է 75 տոկոսով բարելավված ցեղից: Բացի այդ, ստեղծված է անգլիական սպիտակ խոզերի մաքրացեղ հոտ—25 հազար գլխից:

Ներկայումս խորհանտեսությունների հոտի մեջ կան անասունների ամենաարժեքավոր տեսակներ, վորոնք վոչ թե արտասահմանից են ստացված, այլ աճեցված են մեր սեփական տնտեսություններում և սալխս են ուկրոգային կիթ, ծին և բրդի մեծ քանակ:

Այստեղ կհիշատակեմ նրանցից մի քանիսն այն նպատակով, վորպեսզի յուրաքանչյուր խորհանտեսություն իր առաջ խնդիր դնի, վորքան հնարավոր է, ավելի շատ աճեցնել նման բարձրորակ տեսակներ:

«Բողաճայա» կովը 7 ծնից հետո տարեկան կիթ է տվել 9,265 կգ. կաթ: «Վլաստնայա» կովը 5 ծնից հետո տվել է 9000 կգ. «Ռեվիլիա», «Պասուշնիցա», «Պլավնայա», «Լենա», «Մայկա» կովերը տարեկան կիթ են տվել 6-ից մինչև 8 հազ կգ.: Մրանք բոլորն աճեցված են Իվանովի մարզի «Կարավայեվո» խորհանտեսությունում, շնորհիվ գործին տեղյակ լինելուն, զոտտեխնիկական աշխատանքներում նոր ձևեր վորոնելու խիզախության, շնորհիվ հարվածային զոտտեխնիկ Մտանիսլավ Շտեյմանի նախաձեռնության և համառության, վորի անունն արդեն հայտնի յե դարձել խորհանտեսության սահմաններից դուրս:

Յեթն այնպեսի ուկրոգայտական, վորոնց մասին յես

հիշատակեցի այստեղ, առայժմ տասնյակներով են հաշվվում, տպա մենք ունենք 3 հազար լիտրից ավելի կաթնատու 4 հազար կով, իսկ տարեկան 2 հազար լիտրից ավելի կիթ տվող կովեր՝ մոտ 50 հազար:

Խոզաբուծության մեջ ևս մենք ունենք վոչ սակավ բարձրարժեք որինակներ: Արտադրող վարազ «Մամսոնը» 5 տարեկան 9 ամս. հասակում ունի 21  $\frac{1}{2}$  փուլ կենդանի քաշ. նրա ծածկած մայրերից 93-ը ծնեցին և միջին թվով տվին 11 խոճկոր: Այսպիսով իբ կյանքի կարճատև շրջանում այդ վարազն արդեն տվեց հազարից ավելի մաքրացեղ խոզ:

Այս վարազն աճեցված է Մոսկվայի մարզի Նիկոնովսկու խորհանտեսությունում, ընկ. Սավետովի կողմից, վորն սկսել է աշխատել վորպես կրտսեր խոզապահ, իսկ ներկայումս ֆերմայի վարիչն է: Արտադրող «Ալմազ» վարազը 4 տարեկան և 9 ամս. հասակում ունի 22 փուլ կենդանի քաշ. նրանից բեղմնավորված մայրը միջին թվով տալիս է մոտ 12 խոճկոր: Նրան բուծել է Պարկովի մարզի ընկ. Բուդչոնու անվան խորհանտեսության ավազ զոտտեխնիկ ընկ. Մատյուշան, վորը 5 տարի Խորհանտեսությունում է աշխատում: Շատ հետ չի մնացել և «Մամսուչկա» վարազը. նա ընդամենը 3 տարեկան 7 ամս. է, ունի առայժմ 16 փուլ կենդանի քաշ. նրա ծածկած մայրերից 26-ը միջին թվով տվել են 12 խոճկոր: Նրան բուծել է զոտտեխնիկ Տոլստոյը, վոր 8 տարի անընդհատ աշխատել է Մոսկվայի մարզի Բոլշե-Ալեքսեյեվի ցեղային խորհանտեսությունում:

Արտասահմանյան լավագույններին չգիջող բացառիկ արժեքավոր որինակներ կան և մեր վոչխարաբուծական խորհանտեսություններում: Մարիանովսկու վոչխարաբուծական խորհանտեսությունում ռամբուլյե բարձրարժեք ցեղի առանձին որինակների կենդանի քաշը 7 փթից ավելի յե, իսկ բրդի խուզը՝ 11,4 կգ.:

Անցնենք անասունների մթերատվության ավելացման ընդհանուր տվյալներին: Այստեղ ևս մենք կարող ենք մի քանի դրական արդյունքներ նշել:

Վերցնենք կիթի տվյալները. Հյուսիսային յերկրի, Լենինգրադի մարզի, Մոսկվայի մարզի, Արևմտյան մարզի, Գորկու յերկրի, Սվերդլովի մարզի, Թաթարայի, Կենտրոնական սևահող մարզի և Ուկրայինայի տրեստներում հոտի յուրաքանչյուր կովի տարեկան միջին կիթը 1933 թ. 1033-ի դիմաց 1934 թ. հասել է 1210 լիտրի: Արևմտյան Սիբիրի տրեստներում 1933 թ. 914-ի

դիմաց՝ 1056 լարի և, վերջապես, Կաղակոտանում (ուր դեռևս պահպանվում է հորթերին ծծեցնելու մեթոդը) կիթը հավասար է 653 լարի (1933 թվականի 561 լարի դիմաց):

1934 թ. տարեկան միջին կիթի արդյունքները թեպետ և նկատելի քայլ է դեպի առաջ՝ անասնապահական խորհրդատեսությունների կազմակերպման առաջին շրջանի բացառիկորեն ցածր կիթի համեմատությամբ, և նույնիսկ անցյալ տարվա համեմատությամբ, այնուամենայնիվ վոչ մի կերպ չեն կարող մեզ բավարարել:

Մեր խորհրդատեսությունները լայն հնարավորությաններ ունեն խիստ նշանակալից չափով բարձրացնելու կիթը: Այդ ցույց է տալիս առաջավոր խորհրդատեսությունների աշխատանքը:

Վորոնեժի մարզի Լենինի անվան խորհրդատեսության (դիրեկտոր Պիլյագին)—վոչ խորհրդատեսության տարեկան կիթը 2000 լարից ավելի չէ:

«Ուլյանովկա»—Ուկրաինա (դիրեկտոր Ընկ. Պիլիպենկո)—1806 լիտր:

Արևմտյան Սիբիրի տրեստ, Չերեպանովի խորհրդատեսություն (դիրեկտոր Ընկ. Վշիվցևի)—1800 լիտր և այլն:

Տես կարող եյի հիշատակել բավական շատ նման խորհրդատեսություններ: Այս լավագույն խորհրդատեսություններն ամենևին չեն գտնվում հատուկ բարենպաստ—ուրիշ խորհրդատեսություններից տարբեր պայմաններում: Նրանց ցուցանիշներին լիովին հնարավորություն ունի հասնելու վոչ խորհրդատեսային սխտեմը: Ընկերներ Պիլյագինի, Պիլիպենկոյի, Վշիվցևի հմուտ ղեկավարությունը՝ կարգերը խնամքով աճեցնելը, լավ կերի բազա ստեղծելը և անասունների հոգատար խնամքը—անա թե ինչն և վորոշել այդ առաջավոր խորհրդատեսությունների հաջողությունները:

Մեզ անասնապահական խորհրդատեսությունների աշխատանքի քանակական ու վորակական ցուցանիշների զծով կարեվորագույն արդյունք է հանդիսանում պետությանն ապրանքային արտադրանք հանձնելը և ապրանքային ֆերմաների զարգացմանն ու ամրացմանը ցույց տրվող ոգնությունը: Սկսած 1931 թվից, խորհրդատեսություններն անընդհատ ավելացնում են պետությանը հանձնվող արտադրանքի քանակը:

Խորհրդատեսությունները պետությանը հանձնել են.

	1933 թ.	1934
Միս . . . . .	7.900 հազ. փութ	14.795 հազ. փութ
Յուղ . . . . .	1.683 » »	1.957 » »
Բուրդ . . . . .	561 » »	592 » »

Խողաբուծական խորհրդատեսությունները 1934 թվին խողի միս հանձնել են զգալիորեն ավելի շատ, քան անցած 3 տարին միասին վերցրած:

Այնուամենայնիվ հանձնելիք արտադրանքի քանակի զգալի աճի հետ միասին, մենք դեռևս չենք վերացրել անբավարար պարարտացումից, հետևարար, և՛ մասցվի համար հանձնվող անասունի անբավարար քաշից ստացած խոշոր կորուստը:

Պետությանն արտադրանք հանձնելու պլանի կատարումը վճառական հանդամանք է հանդիսանում խորհրդատեսությունների աշխատանքի գնահատման գործում, սակայն դա չի սպառում նրանց, իբրև առաջատար անտեսությունների, խնդիրները յերկրի վոչ անասնապահության վերակառուցման գործում: Այս տեսակետից կոլտնտեսություններին ու կոլտնտեսականներին ցեղական ու բարելավված անասունների վաճառելն անասնապահական խորհրդատեսությունների կարևորագույն խնդիրն ու առաջնահերթ պարտականությունն է հանդիսանում:

Համ կ (բ) կ կենտկոմի հունիսյան պլենումի վորոշումները հորը խթան հանդիսացան խորհրդատեսությունների այդ աշխատանքն ուժեղացնելու գործում: Մինչև 1935 թվականի հունվարի 1-ը խորհրդատեսությունները կոլտնտեսություններին վաճառել են 295 հազար դուխ խոշոր յեղջերավոր անասուն, 483 հազար վոչխար, 747 հազար խոզ և խոճկոր: Այս քանակը մի քանի անգամ գերազանցում է մինչ հունիսյան պլենումը վաճառված անասունների քանակից, սակայն, այնուամենայնիվ, դեռ հետո յե մեր կուսակցության այդ կարևորագույն դիրեկտիվի սպառիչ կատարումից:

Անասնապահական խորհրդատեսությունների քանակական աճման, անասունների ցեղի բարելավման ու նրանց մթերատվության բարձրացման, խորհրդատեսությունների ապրանքային արտադրանքի աճման վերաբերյալ իմ բերած տվյալներն, անստորակույս, ցույց են տալիս, վոր 1934 թվականը՝

մանավանդ հուսակցութեան Կենտրոնի հունիսյան պլենումի վորոշումներէց հետո, խորհանտեսութեաններէ վերելքի համար ևս բեկման տարի հանդիսացաւ:

### ԱՆԱՍՆԱՊԱՀԱԿԱՆ ԽՈՐՀՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՄՐԱՊՆԴՄԱՆ ՁԵՒՆԱՐԿՈՒՄՆԵՐԸ ՅԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Սակայն անասնապահական խորհանտեսութեաններէ աշխատանքում ձեռք բերված բեկումը մոշ մի կերպ չի կարող ծածկել այն խոշորագույն թերութեանները, վոր մենք գեոևս չենք վերացրել: Անասնապահական խորհանտեսութեաններէ աշխատանքը գեւեւս չի գտնվում նրան առաջադրված պահանջների մակարդակին: Այդ արտահայտվում է առաջին հերթին նրանով, վոր անասնապահական խորհանտեսութեանները գեւ մինչև այժմ էլ լրիվ չեն կատարում իրենց պլանային առաջադրանքները:

Այս համազումարում ընկ. Մոլոսովը մատնանշեց, վոր՝ «մեր խորհանտեսութեանները պետք է վերջապես կատարեն գյուղատնտեսութեան առաջատար ձեռնարկութեաններէ իրենց դերը, վերջնականապես վերացնելով կազմակերպչական թափվածութեանը և նրանց տրված տեխնիկան ու պետական խոշոր սեռուրաներն ոգտագործելու անկարողութեանը»: Միևնույն ժամանակ ընկ. Մոլոսովը միանգամայն ձիշտ ընդգծեց խորհանտեսութեաններէ ղեկավար կազմի պատասխանատվութեանը՝ նրանց հանձնարարած գործի համար:

Անասնապահական խորհանտեսութեաններէ աշխատանքում յեղած թերութեանները հիմնականում հետևյալներն են.

առաջին՝ խորհանտեսութեանները մինչև այժմ հարկ յեղած բարձրութեան չեն գրել անասունների աճեցումը, չեն կանոնավորել ցեղային ու զոտտեխնիկական աշխատանքը և գեւ չեն կարողացել խիստ կերպով նվազեցնել մատղաշների կորուստն ու բոլոր սեռակի անասունների ստերլութեանը:

յերկրորդ՝ խորհանտեսութեանները գեւ մինչև այժմ ել սեփական կերի բաղա չեն ստեղծել, վորը կարողանար լիովին ապահովել խորհանտեսութեան անասունների պահանջը:

յերրորդ՝ թույլ է կազմակերպված խորհանտեսութեաններէ կազերի դաստիարակման ու ամրացման գործը:

Դեռևս խոշոր է կազերի հոտունութեանը, չկա աշխատանքի արտադրողականութեան հարկ յեղած բարձրացում:

չորրորդ՝ չկան յուրաքանչյուր խորհանտեսութեան կառուցվածքի կազմակերպչական-տնտեսական պլաններ. չի կանոնավորված ֆինանսական տնտեսութեանը: Բարձր է արտադրանքի քննարկեքը:

Կակեմ անասունների աճեցման հարցից:

Կբերեմ մի քանի հիմնական ցուցանիշներ:

Կարնախալին խորհանտեսութեաններէ գծով 100 կովից ու յերինչից ստացված է 1933 թ. կենդանի աճ 64 գլուխ, իսկ 1934 թ.՝ 74 գլուխ: Վոչխարութեան խորհանտեսութեաններէ գծով ծնի շրջանում 1933 թ. 100 մայր վոչխարից կենդանի գառների ծինը կազմում էր 70,3 տոկոս, իսկ 1934 թ.՝ 82 տոկոս: Խոզարութեան խորհանտեսութեաններէ գծով միջին հաշվով խոճկորների թիվը մեկ ծնից կազմում էր 1933 թ. 5<sup>1</sup>/<sub>2</sub> գլուխ, իսկ 1934 թ.՝ 6,2 գլուխ:

Ի՞նչն է մատղաշների այսպիսի ցածր աճ ապու պատճառը: Ինչպես հայտնի յե, հիմնական պատճառը կովերի, մայր խոզերի և վոչխարների բարձր ստերլութեանն է և մատղաշների անկման անթույլատրելիորեն բարձր տոկոսը:

Սորհանտեսութեաններում բարձր ստերլութեանն ամենից առաջ զուգավորումը վատ կազմակերպելու անմիջական արդյունքն է հանդիսանում: Սորհանտեսութեաններէ ղեկավարները շարունակ թերազնահատում են զուգավորման կամպանիաների ճիշտ կազմակերպման կարևորութեանը, հույս դնելով «բնութեան» վրա, և չեն ապահովում մայրերի ու արտադրողների արժանի խնամքն ու պահպանումը:

Անվիճելի յե, վոր բարձր ստերլութեանը մեր կոլանտեսութեաններում տալիս է մեծ կորուստ, տանում է ղեպի մատղաշների ու արտադրանքի պակասումը:

Անասնապահական խորհանտեսութեաններէ աշխատանքներում հսկայական չարիք է հանդիսանում մատղաշների և հասակավոր անասունների անթույլատրելի բարձր անկումը: 1933 թ. հորթերի կորուստը կազմում էր 19,1 տոկոս, իսկ 1934 թ.՝ 18,5 տոկոս: Մինչև 2 ամսական հասակ ունեցող խոճկորների կորուստը 1933 թ. կազմում էր 28,6 տոկոս, իսկ 1934 թ.՝ 20,2 տոկոս: Գառների կորուստը 1933 թ. կազմում էր 24,5 տոկոս, իսկ 1934 թ.՝ 15,2 տոկոս:

Անկման այսպիսի բարձր տոկոսը բնորոշում է խորհանտեսութեաններէ շատ ղեկավարների կատարած վատ աշխատանքը:

նրանց անկարողութիւնը՝ մատղաշները խնամքը ճիշտ կազմակերպելու, նրանց կերակրելու և պահելու գործում:

Ահա այն տրեստները, վորոնք 1934 թ. անկման այդպիսի բարձր տոկոս են տվել:

Չեյարինսկու մարզի Շադրինսկու խողարուձական տրեստ (գիրեկտոր Տորգաշինը հանված և աշխատանքից և դատի յե տրված) տվել է մատղաշների անկման 36,6 տոկոս: Մինսկու խողարուձ. տրեստ (գիրեկտոր Սմիրնով) — կորուստ՝ 29,8 տոկոս: Նովոսիբիրսկի խողարուձ. տրեստ (գիրեկտոր Մոմչիկ) — 28 տոկոս: Վոլխարարուձական տրեստներից մատղաշների սատկման անթույլատրելի բարձր տոկոս են տվել. Չեյարինսկու մարզի Տրոիցկի խողարուձ. տրեստ (գիրեկտոր Պոտապով) — 28,5 տոկ., Սարատովի խողարուձ. տրեստ (գիրեկտոր Սազայ) — 23,4 տոկ.: Անկման միջյն տոկոսից զգալիորեն գերազանցում են հետևյալ մտակաթնային տրեստները. Արևմտյան տրեստ (գիրեկտոր Դիվենկով) — 33 տոկ., Տյուկայինի տրեստ (գիրեկտոր Իոնով) — 23,6 տոկ. և այլն:

Անկման այսպիսի բարձր տոկոս ունենալը բացարձակորեն անթույլատրելի, ամոթալի յե մեր անասնապահական խորհրդատեսութունների համար:

Սակայն պետք է հիշատակել և՛ այն տրեստները, վորոնք լավ են աշխատում և հանցավոր չեն անկման այն բարձր միջյն տոկոսի համար, վորի մասին յես խոսեցի: Իրանք հետևյալ տրեստներն են. —

Կալմիցկու մտակաթնային տրեստ (գիրեկտոր ընկ. Կակինով), վորը հաջողել է վոյջ տրեստի մասշտաբով հորթերի կորուստն իջեցնել մինչև 3,1 տոկ., Լենինգրադի մտակաթնային տրեստ (գիրեկտոր ընկ. Տրուչին) — կորուստն իջեցրել և մինչև 5,8 տոկ., Ղրիմի վոլխարարուձ. տրեստ (գիրեկտոր ընկ. Լեպսկին), ուր մատղաշների անկումը կազմում է 5 տոկ., Ուկրայնական վոլխար. տրեստ — 5,6 տոկ., Մորգովսկու խողարուձ. տրեստ — 10,1 տոկ. և Չերնիգորսկու խողարուձ. տրեստ — 11,7 տոկոս և այլն:

Մենք ունենք առանձին խորհրդատեսութուններ, վորոնք խիստ իջեցրել են մատղաշների կորստի չափը: «Ուկրայնական սեռայնցիտ» խորհրդատեսութունը (Դոնի կաթնամսային տրեստ) անկումն իջեցրել է մինչև 0,7 տոկոսի: Ծնված 1300 հորթից սատկել է 10-ը: «Կրասնի գոտտեխնիկ» խողարուձ. խորհրդատեսութունը՝ (Ուկրայնովսկու խողարուձ. տրեստ) — 1,6 տոկ.: Ծնված 4737 խոճկորներից սատկել է 78-ը: Ջանիբեկի խորհրդուն-

տեսութունը (արևմտյան Կազակստանի կաթնամսային տրեստը) հաջողել է անկումն իջեցնել մինչև 1,7 տոկոսի, «Բրբր-Իշուն» վոլխարարուձ. խորհրդատեսութունը (Ղրիմ) ունի գառների 3,4 տոկ. անկում, և այլն:

Կան խորհրդատեսութուններ, վորոնց միանգամայն հաջողվել է անկման առաջն առնել. Մոսկվայի կաթնամսային տրեստի «Ուստինովսկի» խորհրդատեսութուն (տրեստի գիրեկտոր ընկ. Մոլկով) — 237 կովից ծնել են 232-ը, և ըրտը հորթերը պահպանված են: Դոնկաթնատրեստի «Ուզարնիկ» խորհրդատեսութուն (գիրեկտոր ընկ. Կլազման) — ստացել է 468 հորթ. չունի անկման և վոյ մի դեպք: «Նեզամոժնիկ» խորհրդատեսութուն, (գիրեկտոր ընկ. Նաուժչիկ) — 369 հորթից նույնպես անկման և վոյ մի դեպք չի ունեցել:

Ինչ են ասում այս որինակները: Նրանք կրկին ու կրկին անգամ վկայում են այն մասին, վոր վոյջ գործը մարդկանց մեջ է, վոյջ գործը անասունի խնամքի մեջ է, մատղաշների սիրով աճեցման, աշխատանքը ճիշտ կերպով կազմակերպել կարողանալու, աշխատանքի վարձատրումը ճիշտ կատարելու մեջ և: Այստեղ, ինչպես և ամեն դեպքում, մարդիկ են վճռում գործի հաջողութունը:

Անկումների դեմ պայքարի ուժեղացման անհրաժեշտութունն իր վոյջ սրությամբ հարց է դնում վճռահանորեն բարելավել անասնաբուժական գործը խորհրդատեսութուններում: Ներկայումս մենք բուհերում և տեխնիկումներում պատրաստում ենք 5200 անասնաբուժ և անասնաբուժների ոգնականներ: Անհրաժեշտ է նույնպես, վորպեսզի մեր արդյունաբերութունն ու Հողտղիումն ավելացնեն, ինչպես դա նախատեսված է կառավարության պլանով, անասնաբուժական գործիքների արտադրութունը, հականխիչ միջոցները, բրուզրեպարատները և գեդորայքը:

Մորհրդատեսութունները հատուկ ուշադրութուն պիտի դարձնեն հիվանդութունների կանխման գործին, սանիտարական պայմանների բարելավմանը՝ գոմերում պահպանել մաքրություն և կիրառել անասունների կերակրման ու նրանց խնամքի կանոնները:

Յես արդեն ասացի, վոր անասնապահական խորհրդատեսութունները ներկայումս ունեն առաջնակարգ հայրենի և ներմուծվող ցեղի մաքրացեղ ու բարելավված անասունների զգալի քա-

նախություն և հնարավորութիւն ունեն լող միայն լիովին ապահովելու սեփական հոտի մետիսացումը, այլև ոգնելու կոլտընտեսութիւններին՝ կարճ ժամանակում մետիսացման միջոցով բարելավելու կոլտնտեսային անասունների տոհմը:

Մեր բոլոր խորհրտեսութիւնները պետք է դառնան ցեղային և բարելավված անասուններ ունեցող խորհրտեսութիւններ:

Այդ բանին հասնելու առաջին քայլն արված է մեր կողմից: Կենտրոնի հունիսյան պլենումի վորտչումների հիման վրա մենք ձեռնարկեցինք բարելավված անասուններին առանձին խմբերի (կորիդի) առանձնացման աշխատանքին, առանց բացառութեան բոլոր խորհրտեսութիւններում: Ներկայումս արդեն ջոկված են հատուկ խմբերում խողարում. խորհրտեսութիւնների գծով՝ 16 հազար մայր, խոշոր յեղջերավոր անասունների գծով՝ 180 հազ. գլուխ, վորտնցից կովեր 100 հազ. գլուխ, և վոչխարների գծով՝ 137 հազ. գլուխ:

Այնուհետև ընկ Կայմանովիչը խոսում է անասունների տոհմի հետագա բարելավման խնդիրների մասին, հատկապես խոշոր յեղջերավոր անասունների և վոչխարների:

Մենք պետք է խոշոր աշխատանք տանենք ստեղծելու համար հատուկ բարենպաստ պայմաններ մեր սիստեմի ցեղական խորհրտեսութիւնների համար՝ մատակարարման, կադրերի, բանվորներին՝ բնակարանով ապահովելու տեսակետից, և այլն:

Այս բոլոր ասածներից ինչպիսի յեղրակացութիւններ են քրիսում անասունների աճեցման և նրանց վորակական բարելավման ուղղութեամբ:

առաջին. խորհրտեսութիւնները պարտավոր են ամենամոտիկ ժամանակում մինիմումի հասցնել ստերջութիւնը, մատղաշների կորուստը և անասունների անկումը, այդ խնդիրը դիտելով վորպես հիմնական պայման՝ անասնապահական խորհրտեսութիւնների կողմից ապրանքային արտադրանքի հանձման և կոլտնտեսութիւններին ու կոլտնտեսականներին անասուններ վաճառելու պլանային առաջադրանքները կատարման համար:

յերկրորդ. խորհրտեսութիւնների աշխատողների վոչ ուղարկութիւնը պետք է կենտրոնացված լինի մասշտաբի նկատմամբ առավելագոյն հոգատար խնամք ունենալու, նրանց ու-

ցիտնայ ձեով կերակրելու, պահպանելու և զոտաողջապահական խնդիրները վրա:

յերրորդ. պայքար մղել խորհրտեսութիւններում յեղած մասսայական հիվանդութիւններն ու եպիզոտիաները լիովին վերացնելու համար:

չորրորդ. մենք պետք է ամենամոտիկ ժամանակներում լիովին մետիսացման յենթարկենք խորհրտեսութիւնների վոչցեղական անասուններին, սիստեմատիկ աշխատանք ծավալենք բարելավված անասունների առանձնացված խմբերի մեջ, ինչպես նաև բարձր աստիճանի հասցնենք մեր ցեղական տնտեսութիւնների աշխատանքը:

Մակայն հոտի աճեցման զործում, անասունների մետիսացման, լավ մետիսներ—վոչխարներ, խողեր ու խոշոր յեղջերավոր անասուններ աճեցնելու զործում լավ արդյունքների հասնելը դեռևս քիչ է: Այդ բոլոր արդյունքները կարող են սպասուալիքի տակ դրվել, յեթե խորհրտեսութիւններում չտեղծվի հաստատուն հիմք—կերի սեփական բազա: Ինչ ներկայումս էլ մեր խորհրտեսութիւններում քիչ չեն այնպիսի ղեկավարներ, վորոնք մոտավորապես այսպես են դատում թե՛ «անասուն լինի, իսկ կեր պետութիւնը կտա»: Այս բացարձակապես սխալ ու հակապետական տեսակետը պետք է դատապարտվի խորհուրդների համազումարի կողմից և խորհրտեսութիւնների բոլոր աշխատողները պետք է իրենց վոչ ուժերը լարեն կերի սեփական բազա ստեղծելու համար:

չնարավորութիւններ կան արդյոք դրա համար: Անվիճելիորեն կան: Իսկապես, ինչ է հարկավոր կերի սեփական բազա ստեղծելու համար:

Առաջին. խորհրտեսութիւններն իրենց տրամադրութեան տակ ունեն արոտատեղերի և խոտարքների հսկայական տարածութիւններ: Հարկավոր է միայն լիակատար կանոնավոր վիճակում պահել այն և բարելավել յերբեմն նույնիսկ ամենահասարակ ձեռնարկումներ կիրառելու միջոցով:

Յերկրորդ. ուցիտում բավարար քանակութեամբ կեր ստանալու համար՝ անհրաժեշտ է ավելացնել—և զգալիորեն ավելացնել—ցանովի խոտաբույսերի, սիլոսային կուլտուրաների և արմատապտուղների արտադրութիւնը՝ հատկապես խողարուծական և խոշոր յեղջերավոր անասուններ ունեցող խորհրտեսութիւններում:

Յերրորդ. մենք հնարավորութիւն ունենք, անասնապահա-  
կան խորհանտեսութիւններում հետազայում մեքենայացում  
մտցնելու դեպքում ավելացնել կերի սեսուրաները: Մենք արդին  
ընթանում ենք այս ուղիով:

Այս տարի մենք անասնապահական խորհանտեսութիւն-  
ներին տալիս ենք 1600 կոմբայն, անցյալ տարվա 231-ի փո-  
խարեն:

Սոտհնձի մեքենայացման հարցի վրա մենք պետք է աշ-  
խատենք ծանր արդյունաբերութեան ժողկոմատի հետ միասին,  
քանի վոր մեր ցավը—խոտհնձի գործում ուշանալը—տեղի յե ու-  
նենում գլխավորապես այն պատճառով, վոր մենք դեռ չենք  
գտել այնպիսի մեքենաներ, վորոնք հնարավորութիւն տան  
հունձը կատարել բանվորական ձեռներէ նվազագույն ծախսու-  
մով և առավել կարճ ժամկետներում ու առանց խոշոր կորուստ-  
ների:

Մեր խորհանտեսութիւններում պետք է ամենալայն կիրա-  
ռումը գտնեն խոտհնձի աշխատանքները մեքենայացնելու ամե-  
նապարզ հարմարանքները, վորոնք, ինչպես ցույց են տալի  
փորձերը, զգալի արդյունքներ են տալի:

Չորրորդ. անասնապահական խորհանտեսութիւններում  
ձիշտ ցանքաշրջանառութիւն կիրառելու միջոցով, մենք պետք  
է բոլոր հնարավորութիւններն ստեղծենք առավելագույն չա-  
փով ոգտագործելու վարելու համար պիտանի հողերը և ջրի սե-  
սուրաների արտադրութիւնը:

Այս աշխատանքը մենք արդեն սկսել ենք, հատկապես այս  
տարվա գարնան խողարուծական խորհանտեսութիւնների բոլոր  
ցանքերը պետք է կատարվեն հաստատված ցանքաշրջանառու-  
թեան համապատասխան, իսկ ցանքաշրջանառութեան աշխատանք-  
ները կառուցված են, գլխավորապես, յեղնելով խորհանտեսու-  
թիւնների իրենց խտացրած կերերի առավելագույն քաղարար-  
ման անհրաժեշտութիւնից և արմատապտուղների ու կոշտ կե-  
րի 100 տոկոսային ապահովումից:

Հինգերորդ. ցանքերի ստրուկտուրայի փոփոխումը, խորհ-  
անտեսութիւնների մեքենայացման ուժեղացումն և այլ ձեռ-  
նարկումները դեռևս չեն կարող լիովին լուծել կերի բազա ստեղ-  
ծելու խնդիրը, յեթե առավելագույն չափով չբարձրացվի բերքա-  
տվութիւնը:

Մենք պետք է այստեղ, այս համագումարում ամենայն

պարզութեամբ հայտարարենք, վոր անասնապահական խորհան-  
տեսութիւնները դեռ շատ վատ են պայքարում բերքատվութեան  
համար: Զինվելով արդատ խնդրայի ու մեքենայացման վողջ  
փորձով մենք պետք է համառ պայքար մղենք խորհանտեսա-  
յի՛ն դաշտերի բերքատվութեան համար, կերի սեփական ամուր  
բազա ստեղծելու համար:

Սորհանտեսութիւններն ստեղծել են անասնապահական  
անտեսութեան հողարավոր աշխատողները՝ անասնապահ բրի-  
գադներ, հովիվներ, խողապահներ, կով կիթողներ, տավարապահներ  
և այլն: Մեր խորհանտեսութիւնների բանվորներն այս տա-  
րիներին ընթացքում զգալիորեն աճել են կուլտուրական տեսա-  
կետից և նրանցից շատերն արդեն աշխատանքի նկատմամբ,  
բարձր գիտակցական վերաբերմունքի որինակներ են ցույց  
տալիս:

Սորհանտեսութիւնների ամբապնդման ու զարգացման  
գործում խոշոր ոգնութիւն են ցույց տալիս կուսակցութեան  
կողմից կազմակերպված քաղբաժինները՝ խորհանտեսութիւն-  
ները մաքրելով դասակարգային խորթ տարրերից, դաստիարակե-  
լով նոր կադրեր, նոր մարդիկ, խորհանտեսութեան բանվորներին  
համախմբելով խորհանտեսութիւնների առաջ դրված խնդիրնե-  
րի կատարման շուրջը, բարելավելով նրանց նյութական-կենցա-  
ղային պայմանները և նրանց կուլտուրական պահանջները սպա-  
սարկումը:

Սակայն մենք դեռ չենք կարող ստել վոր անասնապահա-  
կան խորհանտեսութիւններում լուծված է կադրերի պրոբլեմը:  
Այս խնդրի լուծման համար դեռևս շատ աշխատանք կա կատա-  
րելու: Մեղանում դեռևս հիմնական պրոֆեսիաների կադրերի  
պակաս է զգացվում: Դա բացատրվում է գլխավորապես նրանով,  
վոր մեր անասնապահական խորհանտեսութիւններում դեռևս  
կադրերի հոսունութիւնը շատ զգալի յե:

Կուսակցութեան XVՍ համագումարում ընկ. Կազեմովիչը  
չափազանց շեշտակիորեն բնութագրեց շատ տնտեսավարների  
անկարողութիւնը՝ մարդկանց բնութագրեան գործում: Նա ասում  
էր՝ «յերբ ասում են, թե մենք մարդիկ չունենք, այդ ճիշտ չե:  
Մարդիկ կան՝ և տաղանդավոր մարդիկ, պետք է կարողանալ  
առաջ քաշել նրանց, բարձրացնել և դնել հարկ յեղած տեղում:  
Պետք է կարողանալ ըստ հարկի ղեկավարել նրանց»: Ահա այս  
բանը մեր խորհանտեսութիւնների ղեկավարներից շատերը չեն

հասկանում: Մեղանում դեռ շատ հաճախ մարդկանց ուսումնասիրում են ձեռագրերն, հարցաթերթիկներով և վոչ թե ըստ էյուլթյան:

Պայքարը կուլտուրական-կենցաղային պայմաններին համար, վոր ծավալված և քաղաքայինները կողմից շատ խորհանտեսութուններում, ցույց և տալիս, թե ինչպիսի հսկայական հաջողությունների կարելի չե հասնել խորհանտեսութունները գյուղ/կուլտուրական-խորհրդային կենտրոններ դարձնելու գործում:

Խորհանտեսութունների կազմերի հոսունություն վրա ուժեղ չափով ազդում և աշխատավարձի սխտեմի մինչև վերջին ժամանակներս գոյություն ունեցող վոչ-կատարյալ վիճակը: Որինակ, խորհանտեսութուններում աննշան չափով եր կիրառվում գործարքը, հաշիվներն աչքի էյին ընկնում այնպիսի խճճվածությունում ու բարդությունում, վոր խորհանտեսության բանվորն է վիճակի չեր ասելու, թե վորքան և նա վաստակել այս կամ այն ժամանակամիջոցում:

Ընկ. կարմանովիչը խոսում և աշխատանքի կազմակերպման և գործարքի արմատացման մասին:

Չնայած զգալի թվով յիղած մասնագետներին, վոր ամեն տարի բաց են թողնում մեր բունները և տեխնիկոսները, այնուամենայնիվ խորհանտեսութունները դեռևս մեծ կարիք ունեն այդպիսիների: Մասայական վորակի կազմեր և միջին ու բարձր վորակի մասնագետներ պատրաստելու պլանը 1935 թ. կազմված և այն հաշվով, վորպեսզի ստեղծվի այդ տեսակետից նկատելի տեղաշարժ: Տարբեր դասընթացներում և դպրոցներում հիմնական առաջատար պրոֆեսիաների գծով պետք և պատրաստվեն 25 հազարից ավելի մարդ, իսկ յեթե հաշվի առնենք հիմնական պրոֆեսիաների աշխատողները վոչ ջ քանակությունը, վորոնք սովորում են նախապատրաստման և վերապատրաստման կուրսերում առանց կտրվելու և՛ կտրվելով արտադրությունից, այն ժամանակ կատանանք պատկառելի թիվ՝ 70 հազար մարդ:

Խորհանտեսութունների ժողկոմատի սխտեմի մեջ մտնող 15 բուններն ու 71 տեխնիկոսները պետք և պատրաստեն 1935 թվականին բարձր վորակի 11.500 մասնագետներ և միջին վորակի 18 հազարից ավելի մասնագետներ:

Մակայն գործը վոչ միայն այն և, վոր պատրաստենք պակասող կազմերը, այլև այն, վոր աշխատենք ամբացնել այդ կազմերը խորհանտեսութուններում, ուշադիր վերաբերմունք ցույց

տանք նրանց և պայմաններ ստեղծենք նրանց համար՝ իրենց գիտելիքների հետագա լայնացման ու վորակի բարձրացման համար:

Այս բոլորը պետք և ապահովեն 1935 թվականին զգալիորեն բարձրացնելու աշխատանքի արտադրողականությունը, վոր դեռևս անբավարար մակարդակի վրա չե գտնվում:

1935 թվականին անասնապահական խորհանտեսութունները, պլանի համաձայն, 1934 թ. համեմատությամբ պետք և աշխատանքի արտադրողականությունը բարձրացնեն 21,2 տոկոսով: Խորհանտեսութունները պետք և լիովին կատարեն այս խնդիրը:

Ընկ. կարմանովիչը կանգ և առնում կազմակերպչական թափ-թիվածությունը վերացնելու և խորհանտեսութունների չափից դուրս մասնագիտացումն ու ծանրաշարժությունը վերացնելու ձեռնարկումների վրա:

1007  
34814  
3326

### ԽՈՐՀՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԴԱՐՁՆԵՆՔ ՈՐԻՆԱԿԵԼԻ ՑՈՒՑԱԴՐԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1935 թվականը պետք և վճռական պայքարի տարի լինի վոչ միայն արտադրանքի հանձնման առաջադրանքներն անպայմանորեն կատարելու, այլև հանձնվող մսի, յուղի ու բրդի վորակը բարձրացնելու:

Կատարել մսի հանձնման պլանը, այդ ամեններն չի նշանակում միայն հանձնել վորոշ քանակությամբ միս: Այդ միեռնային ժամանակ նշանակում և հանձնել պարարտ, լավ կերակրված անասուններ: Մեզ մոտ, խորհանտեսութուններում, հաճախ մսի հանձնման պլանը կատարելու դիմաց տալիս են լրար անասուններ, այսինքն՝ հանձնում են տասնյակ ու հարյուրավոր գլուխ ավելորդ անասուն և դրանով իսկ խոշոր ֆլաս են հասցնում խորհանտեսութուններին: Մենք պետք և վճռական պայքար մղենք պլանով չնախատեսված հսկայական քանակությամբ ավելորդ անասուններ մորթելու պրակտիկայի դեմ:

Անհրաժեշտ և, վոր խորհանտեսութունները բոլոր աշխատողները խիստ հողատար վերաբերմունք ունենան պետական սեփականության նկատմամբ, վճռականորեն արմատախիլ անելով մթերքների, կերի և խոտերի օգտագործման հաիշտակումները և վատնումները:



Մթերքների հանձնման պետական առաջադրանքների կատարմանը համահավասար չափով, խորհրդատեսութունները պարտավոր են ապահովել կոլտնտեսութուններին մատչալ ու հասունացած անասուններ վաճառելու պետական պլանի կատարումը:

1935 թվականին խորհրդատեսութունները պարտավոր են կոլտնտեսութուններին ու կոլտնտեսականներին վաճառել 430 հազար գլուխ խոշոր յեղջերավոր անասուն ու հորթ, մեկ միլիոն խոճկոր և 450 հազար վոչխար: Խնդիրն այն է, վոր կուսակցության ու կառավարության առաջադրանքը կատարվի որինակելիորեն, պահպանելով վաճառվող անասունների բարձր վորակը:

Կուսակցության XVII համագումարում ընկ. Ստալինը խոսելով խորհրդատեսութունների մասին, մատնանշեց այն հակայական անհամապատասխանությունը, վոր գոյություն ունի պետության կողմից խորհրդատեսութունների գործում կատարված ներդրումների և նրանց աշխատանքի փաստացի արդյունքների միջև: Մենք պարտավոր ենք ամենակարճ ժամկետում վերացնել այդ անհամապատասխանությունը և մեր կոլտնտեսութունները դարձնել շահավետ:

Մենք արդեն ունենք տասնյակ կոլտնտեսութուններ և նույնիսկ առանձին տրեստներ, վորոնք արդեն շահավետ են դարձրել իրանց տնտեսությունները: Որինակ՝ վոչխարաբուծ. խորհրդատեսություններ՝ «Բորչկի» (գիրեկտոր ընկ. Վերեշչագին), «Պրոկտարսկի» (գիրեկտոր ընկ. Վասիլյեվ), «Բակրես» (գիրեկտոր ընկ. Ռոմանով), խոզաբուծ. խորհրդատեսություններ՝ Լենինի անվան (գիրեկտոր ընկ. Պետրակով), «Կուբանեց» (գիրեկտոր ընկ. Պարֆենյուկ), «Աուզդինսկի» (գիրեկտոր ընկ. Լյուսին) արդեն պետություն տալիս են հարյուր հազարավոր ուղղի հավելյալ յեկամուտ:

Տրեստների մեջ շահավետության են հասել Պավլոգարսկու (գիրեկտոր ընկ. Բոնդարենկո), Որենբուրգի (գիրեկտոր ընկ. Լավրենտև), Նովոսիբիրսկու (գիրեկտոր ընկ. Ստոլպնիկ) կաթնափայտի տրեստները:

Ուշագրություն արժանի նվաճումներ և ձեռք բերել Դադեստանի վոչխարաբուծական տրեստը: Դիրեկտոր ընկ. Զիմենկովը կարողացել է հասնել տրեստի վողջ աշխատանքների լուրջ բարելավմանը և այն դարձնել շահավետ: Բավական է մատնանշել վոր գառների կորուստը մի տարվա ընթացքում 34 տոկոսից

կրճատել է ու հասցրել 9,7 տոկոսի, իսկ կրկնակի իջեցված է մայրերի ստերջությունը: Տրեստը մսի ու բրդի հանձնման պլանը գերակատարել է:

Դեռևս 1933 թվականին տրեստն աչքի յեր ընկնում մեծ վրասներով, իսկ 1934 թ. նա ունի արդեն պատկառելի կուտակում:

Այս խորհրդատեսութունների ու տրեստների որինակներն ակնհայտորեն համոզում են այն բանում, վոր ներկայումս արդեն խորհրդատեսութունները բոլոր հնարավորություններն ունեն դառնալու շահավետ տնտեսություններ, վոր XVII համագումարում ընկ. Ստալինի տված ցուցումներն սկսում են կյանքում կենսագործվել:

Ընկերներ, այս համագումարում ծավալվեց մեր վողջ ժողովրդական տնտեսության վերելքի ու ծաղկման հոյակապ պատկերը: Մեր վիթխարի շինարարություն հետագա ծավալման գործում պատասխանատու դերը պատկանում է նաև խորհրդատեսություններին, իբրև հացի, կաթի, մսի և բրդի սոցիալիստական ֆարքիկաների:

Սորհրդատեսությունները պետք է գործնականում դառնան գյուղատնտեսության առաջատար ձեռնարկություններ:

Սորհրդատեսությունները բոլոր հնարավորություններն ունեն կուսակցության ու կառավարության կողմից մեր առաջ դրված խնդիրները կենսագործելու:

Գործը մեզ է մնում, խորհրդատեսությունների աշխատողներին:

Մենք պետք է լիովին ոգտագործենք այն հզոր տեխնիկան, վորով գինել են մեզ, լայնորեն կիրառենք ագրոտեխնիկան, որինակելի էլիմբերի վրա դնենք անասնապահությունը խորհրդատեսություններում:

Մեր կուսակցության ղեկավարությամբ, մեր իմաստուն առաջնորդ ու ուսուցիչ ընկ. Ստալինի ղեկավարությամբ 1935 թվականը դարձնենք անասնապահական խորհրդատեսությունների հզոր վերելքի տարի (բուռն ծափեր):





Գառ. խմբագիր՝ Ա. Լազարյան  
Սրբագրիչ՝ Գար. Հախորյան

Քարգռ. Արթ. Գրիգորյան  
Գլավ. լիտ. լրագր. № Գ-69

Հրատ. № 186

պատվեր № 199

տիրաժ 4000

Հանձնված է արտադրության փետրվարի 20-ին 1935 թ.

Ստորագրված է տպագրելու փետրվարի 26-ին

Գյուլիերատի տպարան, Յերևան, Նալբանդյան 50

«Ազգային գրադարան»



NL0288861

7122 30 407.

21.250



---

М. И. КАЛМАНОВИЧ

о мероприятиях по укреплению и  
развитию животноводства.

---

Сельхозгиз

1935

Эривань